ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (MICROSOFT OFFICE)» ԹԵՄԱՅՈՎ

11.09.2020 16:26

Հարգելի՛ փաստաբաններ,

15.09.2020թ. ժամը 16:00-18:00-ն ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպելու է հեռավար դասընթաց **«Համակարգչային գրագիտություն (Microsoft Office)»** թեմայով:

- Դասընթացը կվարի ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»-ի դասախոս, ֆիզմաթ.գ.թ., դոցենտ Գոհարիկ Պետրոսյանը:

- Դասընթացին ցանկալի է միանալ համակարգչով՝ գործնական աշխատանք կատարելու համար:

- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 15.09.2020թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը:

- Դասընթացին նախապես գրանցված փաստաբանների էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի հրավեր, որն ակտիվացնելով կմիանաք դասընթացի հարթակին:

- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

<u>Ուշադրություն.</u> *Դասընթացի անցկացման ZOOM հարթակին միաժամանակ կարող է միանալ մինչև 100 մասնակից, ուստի գրանցման առաջնահերթությունը տրվելու է դասընթացին առավել վաղ գրանցված 100 փաստաբանի:*

Հետևապես՝ խնդրում ենք դասընթացին գրանցվել միայն այն դեպքում, եթե համոզված եք, որ դասընթացին մասնակցելու եք:

<u>Ի գիտություն.</u> *ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող վերապատրաստման այլ դասընթացների ընթացքում նախապես գրանցված մի շարք փաստաբաններ մուտք չեն գործել վերապատրաստման հարթակ, իսկ դասընթացին ավելի ուշ գրանցման հայտ ներկայացրած փաստաբաններին՝ մասնակիցների սահմանափակ քանակով պայմանավորված, դասընթացի հրավեր (հղում) չի ուղարկվել, ինչի արդյունքում վերջիններս հնարավորություն չեն ունեցել մասնակցելու դասընթացին: Ուստի նման իրավիճակները բացառելու նպատակով սույն դասընթացներին գրանցման հայտ ներկայացրած բոլոր փաստաբաններին կուղարկվի դասընթացի անցկացման հարթակ մուտք գործելու հրավերը (հղումը), ինչի հետևանքով դասընթացին մասնակցելու հնարավորություն կունենան նախատեսված ժամին համակարգ մուտք գործած առաջին 100 փաստաբանները:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })